

11068

311012  
m-84

//

//

II  
II

II  
II  
II

Գ. Ա. ՊՈՂՈՎ



# ՊԻՈՆԵՐՆԵՐԸ

ՅԵՎ

ԱՌԱՋԻՆ

ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ

ԳԵՂՑՐԱՄ 1935

09 DEC 2008  
EFOS 111 8  
24 SEP 2006

Գ. Մ. ՊՈՊՈՎ

ՅԿԽՈՌ

Դ-84

ԱՅ

# ՊԻՌՆԵՐՆԵՐԸ

ՅԵՎ

## ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ

ԺԵՂՈՎԵՐԵԲԻց լրացումներով յեվ փոփոխություններով բարգմանեց  
Բ. Տ. Ա լ լ ո ն կ ե ղ դ յ ա ն

1-124.  
-22

ՊԵՏԱԿԱՆ 1935 ՅԵՐԵՎԱՆ

23.07.2013

11066

Պատ. իմք. Ա. Սարգսյան  
Լեզվ. իմք. Հ. Հարապեցյան  
Տեխ. իմք. Տ. Խաչվանելյան  
Մթագրիչ Հ. Խանդամուր



1260

37

Պետհրատի տպարան  
Գլավլիստ 198, Պատվեր 747, Հրատ. 3348, Տիբաժ. 1000  
Հանձնված և արտադրության 9 Հունիսի 1935 ստորագր-  
ված և տպադր. 20 Հունիսի 1935

### ՑԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս գիրքը համառոտ ձեռնարկ է Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի պատանի բարեկամների խմբակների համար:

Գրքի նպատակն առաջին ոգնության բոլոր խընդիրներն ընդգրկելը չե, այլ վորոշ գործնական ոժանդակություն ցույց տալ կոլվարին և Կարմիր Խաչի ու Կարմիր Մահիկի պատանի բարեկամների խմբակներին:

Սրա մեջ, բժշկի զրույցի ձևով, մատչելի լեզվով տրված են անհրաժեշտ տեղեկություններ, թե ինչպես ցույց տալ առաջին ոգնությունը տարբեր գեղագիտում:

Այս տեղեկությունները պետք են լուրացնեն վոչ թե միայն Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի պատանի բարեկամները, այլև բոլոր պիոներները:

ԲԺ. 1. ԱՀԱՀՎԵՐԴՔԱՆ

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

«Կարմիր աստղ» կոլեկտիվի պիոներ  
Միշան, փողոցով վազելիս, ընկավ մարդա-  
տար ավտոյի տակ։ Ավտոն սլացավ, չքա-  
ցավ։ Միշան մնաց ձյունի վրա ընկած։ Վի-  
րավորված վոտքի տակի ձյունը արյունով  
ներկվեց։ Նրա հետ խաղացող յերեխաները,  
չգիտելին ինչ անեն։ Հասավ միլիցիոները,  
կանգնեցրեց անցնող կառապանին, Մի-  
շային դրեց կառքի մեջ և տարավ հիվան-  
դանոց։

Յերեկոյան կոլեկտիվում յերկար խոսում  
ելին Միշայի հետ պատահած դժբախտու-  
թիան մասին։ Յերեխաներն ստիպված ելին  
իրենց խոստովանելու, վոր չկարողացան  
իրենց ընկերոջն առաջին ոգնություն ցուց  
տալ։

«Արդպես չի կարելի, — ասում ելին պիո-  
ներները, — դա խախտակություն ե, մենք

շփոթվեցինք և ոգնություն ցուց չտվինք։  
Ինկ լեթե պատերազմ լինի։ Զե վոր թշնա-  
մին կարող ե ամեն տեղ ոռումը նետել։ Զե  
վոր քաղաքացիներից շատերը կարող են  
վիրավորվել և թունավորվել։ Անհրաժեշտ  
է, վոր մեզանից ամեն մեկը խմանա իրեն  
և ընկերոջն առաջին ոգնություն ցուց  
տալ։ Պետք ե կարմիր Խաչի պատանի բա-  
րեկամների խմբակ կազմակերպել։ Իսկ դու-  
ծարաննեմ, տրակտորի՝ վրա։ Հազվագյուտ  
չե, յերբ մեր ավագ ընկերները տուն են  
գալիս աշխատանքից, վոտքը կամ ձեռքը  
կապած, քերծված, կտրված, ջարդված։  
Պարզ ե, վոր մեր կոլեկտիվը պետք ե ան-  
պայման վերացնի անգրադիտությունը՝ ա-  
ռաջին ոգնությունը ցուց տալու հարցում։

Մյուս որը կովարն անցավ կարմիր  
Խաչի կոմիտեն և խնդրեց դեկավար՝ խըմ-  
բակ կազմակերպելու համար։ Ստացավ պլա-  
կատներ, գլքեր, փաթեթներ, պալուսակ և  
հակագագ։

Դասերն սկսվեցին։

## Ա.Ա.ՁԻՆ ԶԲՈՒՅՑ

Թնագիտ կանգնեցնել արյունահոսությունը

Կոլվարը պատմեց բժշկին, թե ինչպես  
Միշան ընկալ ավտոլի տակ և պիոներների  
ցանկության մասին՝ սովորելու առաջին  
ոգնություն ցուց տալը։ Բժիշկը հեռախո-  
սով կապվեց հիվանդանոցի հետ և հարց-  
րեց Միշալի դրության մասին։

Ապա սկսեց իր զբուցը։

—Յերեխաներ, դուք գիտե՞ք, թե ինչ ե  
պատահել Միշալին և ինչպես ե նա իրեն  
զգում։ Յանկաննեմ եք իմանալ այդ մասին։

—Յանկանում ենք, —խմբով պատասխա-  
նեցին յերեխաները։

—Ուրեմն հանգիստ նստեցեք և լսեցեք։

Իսկ յերեխաներն առանց այն ել արդեն  
հանգիստ նստած, ուշադիր լսում են բժըշ-  
կին։

—Ավտոմիբիլի անիմս անցել և Միշալ

աջ վոտքի վրալով, վիրավորել մաշկը,  
մկանները և ջարդել ազգը ոսկը: Յավից ու  
վախից Միշան կորցրել ե գիտակցությունը:  
Այդպիսի դրությունը կոչվում է ուշագնա-  
ցություն: Հիվանդանոցում Միշայի վոտքը  
դրել են գիպսե բիկակալի մեջ: Թե ինչ ե  
նշանակում դա, հետո կիմանաք: Ներկայումս  
Միշան իրեն լավ ե զգում, միայն շատ ե  
գունատ: Արյունը կորցնելու պատճառով  
թույլ ե: Ա՛յ թե ինչի հասցրեց Միշային  
անզգուշությունը:

Յես լել եմ, վոր դուք վորոշել եք,  
բարձրացնել ձեր կոլեկտիվի կարգապա-  
հությունը և զգույշ լինել փողոցում:

Լսով քայլ ե, բայց ուշադիր պետք ե  
լինել վոչ թե միայն փողոցում, այլ և դըպշ-  
րոցում, արհեստանոցում, գործարանում և  
այլն: Մեքենայի հետ անզգույշ և անշնորք  
վարվելու դեպքում, կարելի յե վնասվել,  
այրվել յեռան ջրով և ալին: Զմշկախա-  
ղի ժամանակ, սառցադաշտում, ընկնում են,  
վոտք կոտրում, կամ հոդը խախտում: Կա-

րելի յե բերել դժբախտ դեպքերի մի շարք  
զանազան որինակներ:


Պատերազմի դաշտում ել ստացվում են  
զանազան վերքեր. մարդիկ վիրավորվում  
են հրացանի կամ գնդացիրի գնդակով,  
ուռմբի կառըներով: Անհրաժեշտ ե վիրա-  
վորին հենց տեղում ցույց տալ բժշկական  
ոգնություն: Յուրաքանչյուր պիոներ պետք  
ե դա կարողանա կատարել:

Վիրավորի առողջությունը և հաճախ  
նույնիսկ կյանքը, կախված ե նրանից, թե  
վորքան ժամանակին և ճիշտ ե ցույց տըր-  
ված նրան առաջին ոգնությունը: Իսկ դուք  
գիտեք, վոր մեզ համար թանկ ե յուրա-  
քանչյուր բանվորական որը և ժամը:

Բայց վերադառնանք Միշային:

Կոլվարն ինձ պատմեց, վոր Միշային  
հիվանդանոց տանելուց հետո, ձյունի վրա  
արյան հետքեր են մնացել: Միշան շատ  
արյուն ե կորցրել և այդ պատճառով ել  
հիմա թույլ և գունատ ե: Բայց չե վոր կա-

թելի յեր այն-  
 պես անել, վոր  
 արքանարյուն  
 չկորցներ:  
 — Իսկ ի՞նչ-  
 պես անել այդ,  
 — հարցրին յե-  
 րեխաները:  
 — Հանգիստ,  
 հանգիստ, յե-  
 րեխաները իմ  
 նպատակը  
 հենց այն ե,  
 վոր կարողա-  
 նամ ձեզ սո-  
 վորեցնել ա-  
 ռաջին ոգնու-  
 թյուն ցուց  
 տալը: Նայե-  
 նի. 1. Կմախ յել արյունատար անոթներ  
 յեք այս նկարին. այստեղ նկարված ե  
 արյունատար սիստեմը, վորով արյունը շարժ-  
 վում է մեր որգանիզմի մեջ: Նա բաղկա-



ցած է խողովակներից, վորոնք կոչվում են  
 արյունատար անոթներ: Այդ անոթներով  
 արյունը, սրաի ազդեցության տակ, շարժ-  
 վում է միշտ միևնույն ուղղությամբ: Այժմ  
 ձեզ համար պետք է հասկանալի լինի, թե  
 ի՞նչ պետք է անել արյունահոսությունը




Նկ. 2. Յերակը սեղմել վերից բարձր.

կանգնեցնելու համար: Պետք է սեղմել  
 անոթի այն ծայրը, վորից հոսում է արյունը:  
 Յեթե վիրավորված է վոտքի յերակը, ինչ-  
 պես Միշտինն եր, պետք է արյունատար  
 յերակը սեղմել վերքից բարձր—աղդրի վե-  
 րի մասում:


Ինչպես տեսնում եք, անհրաժեշտ է խմանալ, թե վորտեղով են անցնում արլունատար յերակները։ Այդ պարզ է նկարից, բայց ավելի լավ է ուսումնասիրենք հենց այստեղ յեղողների զարկերակը։

Փորձեցեք զրջել ձախ ձեռքը ափով գեպի վեր, աջ ձեռքի մատները դրեք ձախ ձեռքի կողքից, թաթից քիչ ցած, ինչպես ցուց է տրված նկարում։



Նկ. 3. Ինչպես ուսափել զարկերակը.

Դուք կզաք համաշափ զարկեր։ Դա զարկերակն է։ Զարկերը լսվում են այն



Նկ. 4. Վոր մասն կարելի յեսեցնելու նպատակը սղմել զարկերակը։  
Կով, պետք եւ մատերով սեղմել վիրավորված յերակը վերը բարձր և վերքի վրա վիրակապ դնելը

Բայց խոշոր յերակի արյունը կանգնեցնել  
միայն վիրակապի միջոցով, հնարավոր չե.  
յերակը յերկար  
ժամանակ մա-  
տերով սեղմել  
դժվար, մեծ  
ուժ և պահան-  
ջում և հոգ-  
նեցնում է:  
Պետք ե այլ  
յելք դառնել:  
Թվ դիտե, ի՞նչ  
կարելի յե ա-  
նել:


Նկ. 5. Ինչպես կանգնեցնել արևահոսումը

—Սեղման (ժողով) դնել վրան, —լոռ-  
թյան մեջ լսվուժ ե Վանկայի ձայնը:  
—Ճիշտ ե, —ասում ե բժիշկը, —պետք  
եր անմիջապես սեղման դնել վերքից  
բարձր, այսինքն վոտքը ազդրում ամուր  
սեղմել գոտիով, պարանով, սրբիչով կամ  
թաշկինակով, կապել հարկավոր ե ամուր,  
այնպես, վոր բոլոր յերակները սեղմվեն:



Պարանը կապելուց հետո, հանգույցի մեջ  
պետք ե մտցնել մի կտոր փայտ և զգու-  
շությամբ վոլորել, մինչև արյան դադարելը:

Պետք ե հիշել վոր սեղմանը չի կարելի  
դնել մերկ մարմնի վրա—սեղմելու ժամա-  
նակ կարող ե մաշկը արանքում ճմլվել:



Նկ. 6. Ինչպես գործածել սեղմանը.

Դրա համար սեղմանի տակը պետք ե  
անցկացնել վորեկ փափուկ կտոր, որինակ  
թաշկինակ, սրբիչ, բամբակ, կամ սեղմանը  
դնել սպիտակեղենի վրայից: Սեղմանն ա-  
մուր կապելուց հետո, արյունը սեղմանից

յած անցնել չի կարող։ Սեղմանը մեկ-  
լերկու ժամից ավելի պահել չի կարելի,  
այլապես մարմնի վերջավորությունը կարող  
է անզգայանալ։ Այդ պատճառով ել, սեղ-  
մանը դնելուց հետո, հիվանդին անմիջա-  
պես պետք է փոխադրել հիվանդանոց կամ  
բուժարան, ուր բժիշկը նրան համապա-  
տասխան ոգնություն ցուց կտա։

Այժմ թեկեք սովորենք, թե ինչպես  
պետք է գտնել զարկերակը և ինչպես գոր-  
ծածել սեղմանը վոտքի կամ ձեռքի վրա։  
Սեղմանի փոխարեն կարող ենք ոգտագոր-  
ծել գոտիներ, զգկապ, թաշկինակ և այլն։  
Սրանով այսոր ավարտենք մեր դասը։

## ՅԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Ինչպես վերք պատպանել վարակումից

Բժշկի առաջարկությամբ, լերկութք  
զրուցի համար, լերեխաները հավաքվեցին  
հիվանդանոցում, ուր պառկած եր Միշան։  
Բնդունարանում բոլոր պիոներներին

սպիտակ, մաքուր խալաթներ հագցրին և  
կուեկտիվը, բժշկի հետ միասին, աստիճան-  
ներով բարձրացավ վերև։

Ամեն տեղ տիրում եր մաքրություն։  
Հասակը փայլում եր։ Բժիշկն զգուշացրեց,  
վոր լերեխաները լուռ լինեն և իրենց ներ-  
կայությամբ չանհանգստացնեն հիվանդնե-  
րին։

Վորոշեցին նախ տեսնել Միշալին։

Նա պառկած եր մի փոքրիկ սենյակում։  
Սպիտակ բարձի վրա աչքի լեր ընկնում  
նրա նոր սափրած, սև գլուխը։ Ծանոթ  
գեմքեր տեսնելով, նրա սև աչքերը գու-  
նատ գեմքի վրա աշխուժացան, իսկ լերե-  
խաների խալաթները ծիծաղելի թվացին  
նրան։

Յերեխաները շրջապատեցին Միշալին  
և սկսեցին հարց ու փորձ անել, թե ինչ-  
պես է իրեն զգում, շուտ կվերադառնա  
արդյոք կոլեկտիվ։

Միշան աշխատում եր քաջ ձեանալ,  
իբրև թե իր հետ պատահածը չնչին դեպք ե,

բայց միևնույն ժամանակ շատ ցավում եր,  
վոր վոսկրի բեկման պատճառով, չի կարող  
յերեխաների հետ գնալ դիտելու «Մեր նվա-  
հումները» ցուցահանդեսը։ Բայց ավելի  
շատ նրան տանջում եր այն միտքը, վոր  
վոտքի պատճառով, գարնանը նրան չեր  
հաջողվելու գնալ «Արտեկ» լագերը, վորի  
համար ուղեգիր ելին խոստացել նրան։ Այդ  
մասին նա հարցրեց նույնիսկ բժշկին և  
չնայած, վոր բժիշկը համոզում եր, վոր  
մինչ այդ վոտքը կառողջանա, սակայն Միշ-  
կան կասկածում եր։

Տեսնելով, վոր Միշան հոգնում ե, բը-  
ժիշկը յերեխաներին տարավ մյուս,  
այնտեղից ել վիրակապության սենյակը։  
Վիրակապության սեղանի վրա պառկած եր  
մի հիվանդ, վորի ձախ ձեռքի թաթն ու-  
ռած եր։ Ավելի ուժեղ եր ցուցամատի ու-  
ռուցքը։ Հիվանդը հյուսն Պետրոսյանն եր։  
Աշխատանքի ժամանակ գործիքով քերծել  
եր իր մատը։ Ծորացած մի կաթիլ արյունը  
սրբել եր իր կեղասոս խալաթով և այդ

«Հնչին գեղքը» մոռացության տվել։ Յերե-  
կոյան քերծվածքի շուրջը կարմրել եր, իսկ  
առավոտյան ուռել եր մատը և սկսվել ցա-  
վերը։ Քերծվածքի տակից յերևում եր թա-  
րախի սպիտակ գիծը։ Այդ որը Պետրոսյանը  
գնում է աշխատանքի։ Աշխատանքի ժամա-  
նակ զգում ե, վոր տաքությունը բարձրա-  
ցել ե և գլուխը ցավում է։ Այդտեղից գը-  
նում է բուժարան, այնտեղից ել նրան ու-  
ղարկում են հիվանդանոց—վիրահատու-  
թյան։ Պետրոսյանը չի համաձայնվում այդ  
«գատարկ» բանի համար գնալ վիրահատու-  
թյան, բայց յերբ նկատում է վերքից գե-  
պի վերև բարձրացող կարմիր բծերը և թեկ  
տակի ցավը, գնում է հիվանդանոց և ա-  
ռում։

—Արք, ինչ հարկավոր եւ։

Յերեխաները հանդիպեցին Պետրոսյա-  
նին վիրաբուժարանում, վիրահատության  
հետեւալ որը։ Հաստ ցուցամատի վերքը  
բաց եր և առատ թարախ եր արտադրում։  
Յերեխաներն այդտեղից անցան լաբորա-

տորիա և շարվեցին աթոռների վրա:

—Դուք, յերեխաներ, տեսաք,—ասաց  
բժիշկը,—թե հուսն Պետրոսյանին, հասա-  
րակ քերծվածքի շնորհիվ ինչ ե պատա-  
հել: Յեթե ժամանակին վիրահատության  
չենթարկելին, նա կարող եր զրկվել իր  
ձեռքից—ձեռքը ստիպված կլինելին կտրել,  
վորպեսպի նրա կյանքը փրկեն:

Ի՞նչու այդ չնչին քերծվածքն այդպես  
բարդացավ:

—Վերքը վարակվել ե, մանրեներ են  
ընկել մեջը,—լսվեցին ձայներ:

Բայց թե ի՞նչ են ներկայացնում իրեն-  
ցից այդ մանրեները, յերեխաները հաս-  
տատ չգիտելին:

Բժիշկը վերցրեց մի ապակու կտոր,  
վրան մեկ կաթիլ ջուր կաթեցրեց: Հետո  
վերցրեց մի մետաղյա ողակ, քիչ պահեց  
կրակի վրա, հետո մոտեցրեց յերեխաներից  
մեկի ատամներին և այդ ողակով խառնեց  
ապակու վրայի ջրի կաթիլը: Կաթիլը վե-  
րեից ծածկեց ապակով և դրեց խոշորացու-  
ցի տակ:




Նկ. 7. Խոշորացուցիչ

նկարված ե № 8 նկարում:

—Մանրեները կենդանի արարածներ  
են: Նրանք այնպես, ինչպես բոլոր կենդանի-  
ները, սնվում են և մեծանում: Մեծանա-  
լով, մանրեները կիսվում են և յուրա-  
քանչյուր կեսը հետո ապրում ե իր սեփա-  
կան կյանքով: Կան մարդու համար ոգտա-  
ցի տակ:

կար մանրեներ՝ որինակ կաթը թթվում ե-  
և մածուն դառնում այնպիսի մանրեների  
մասնակցությամբ, վորոնք արտադրում են  
կաթնաթթու։

Բայց կան մի շարք մանրեներ, վորոնք




Նկ. 8. Մանրեներ խոռոչացույցի տակ.

ընկնելով մարդու որգանիզմի մեջ, զանա-  
գան հիվանդություններ են առաջ բերում,  
որինակ պալարախտ, քութեց, ծաղիկ, բը-  
ծավոր տիֆ և այլն։ Կան և թարախ առա-

ջացնող մանրեներ, վորոնք քերծվածքի և  
վնասվածքի միջոցով, ընկնում են մարդու  
որգանիզմի մեջ և թարախակալում են ա-  
ռաջ բերում։ Այդ մանրեներն իրենցից ար-  
տադրում են թունավոր նյութեր և թու-  
նավորում մեր որգանիզմը։

Պետրոսյանի քերծվածքի մեջ թարախ  
առաջ բերող մանրեներ են ընկել այն մո-  
մենտին, լեռը նա կեղտոտ խալաթով սըր-  
բել ե վերքը։ Իսկ կարելի լեր այնպես ա-  
նել, վոր վերքը չկեղտոտվեր և չվարակվեր։  
Այդ գեպքում, առանց վորեե վիրահատու-  
թյան ել նա կառողջանար։ Դրա համար  
պետք եր վերքի շուրջը սըրբել սպիրուում,  
կամ մաքուր ջրում թրջած բամբակի կտո-  
րով, հետո վերքի ծալը բրին լող քսել։  
Վերքն առհասարակ չպետք ե լվանալ, վոր-  
պեսզի ջրի հետ միասին, վերքի խորքերը  
մանրեներ և կեղտոտություն չանցնեն։  
Այդ նույն նպատակով վերքի շուրջը լեղած  
մաշկը պետք ե մաքրել վերքից դեպի դուրս  
և վոչ թե ընդհակառակը դրսից դեպի

վերքը։ Հետո վերքը պետք է պահպանել նոր մասրեներ մտնելուց։ Այս նպատակով վերքը ծածկվում է վիրակապով։



Նկ. 9. Չամբախն իրեվ վիրակապ

Բայց վորովհետև վիրակապի վրա յել կարող են լինել մանրեներ, այդ պատճա-


ռով ել չի կարելի ամեն մի պատճամամբ ձեռք ընկած կտոր դնել վերքի վրա։ Վերքի վրա կարելի յէ դնել հատուկ մշակման լենթարկված նյութ—առաջին ոգնության անհատական ծրաբ։



Նկ. 10. Անհատական ծրաբ.

Այդ վիրակապական ծրաբը մի փաթեթ է, վորի ծալըին ամրացված են յերկու բարձիկներ՝ բամբակից և մառլայից։ Նրանց վրայի մանրեները վոչչացված են գոլորշու կամ սուլիմալի միջոցով, վորով ներծծված

Են և՝ բինաը և՝ բարձիկը։ Վորպեսզի այդ  
հականեխված նյութը չկեղտուավի, նախ  
փաթաթում են թղթի և ապա կտորից կար-  
ված ծրարի մեջ։ Այդպիսի ծրարներ արվում  
են ճակատամասերի յուրաքանչյուր մար-  
տիկի։ Անհրաժեշտ է, վոր մեզանից ամեն



Նկ. 11. Խնայիս բացել ծարը.

մեկն խմանա ծրարի հետ վարվելու ձևերը։  
յերբ բացված է վերջին փաթեթը, բինաը  
պետք է բոնել կողքից, դանել նրա ծալը  
և ձգել։ Այդ ժամանակ բարձիկներն ուղղու-  
վում են։ Բարձիկները պետք է բոնել  
դրաի կողմից և ձեռք չտալ նրա ներսի

մասին, վորով պետք է դրվի վերքի վրա։  
Այդ նպատակով բարձիկների դրաի կողմից  
անց է կացված կարմիր թել կամ գիծ։ Մի-  
այն այդ կողմից կարելի լի բոնել բարձիկը։  
Յերբ բարձիկը դրված է վերքին, պետք  
է ամրացնել բինաով։ Յեթե գնդակը դուրս  
է լեկել վերքի մյուս կողմից, լերկորդ  
բարձիկը կարելի լի դնել լերկորդ։ Վերքի  
վրա և ամրացնել բինաով։ Յերկորդ բար-  
ձիկը այնպիս է հազցված բինաի վրա, վոր  
կարելի լի շարժել այս կամ այն կողմը։  
— Իսկ լեթե հականեխված բինա չլինի,  
ինչ պետք է անել — հարցըին լերեխաները։  
— Յեթե արդուկեք մաքուր, խոնավ  
շորը, նրա վրայի մանրեները կվոչնչացվեն։  
Նոր լվացված, յեռացված մաքուր շորի վրա,  
լեթե պատահաբար մանրեներ ընկնեն,  
այնքան շատ չեն լինի, վորքան կեղտուա  
շորի վրա։ Ուրեմն հականեխված նյութ չը-  
լինելու դեպքում, կարելի լի վերքը կա-  
պել մաքուր թաշկինակով, կամ լվացված  
շորով։ Գործարանում, կորանտեսությու-

նոււի, խորհունտեսությունում, դաշտում,  
դնացքի մեջ, յերկաթզծի կայարաններուն  
և շոգեմեքենաների վրա, պետք ե լինեն  
հատուկ գեղարկղիկներ (կամ պայտապակ-  
ներ), հականեխված վիրակապով, վորպես-  
զի դրանով հնարավոր լինի պաշտպանել  
աշխատանքի ժամանակ առաջացած քերձ-  
վածքները և վերքերը:

Այժմ յեկեք սովորենք, թե ինչպես  
պետք ե կապել վերքը և միենույն ժամա-  
նակ կըկնենք անցյալ դասը—ինչպես կանգ-  
նեցնել արյունահոսությունը։ Հետեւալ ան-  
դամ մենք կսովորենք թե ի՞նչպես ողնու-  
թյուն ցուց տալ վոսկրի բեկման գեպքում։

Յերեխանները խնդրեցին, վոր մյուս  
դասը լինի հիվանդանոցում։

Զըսուցը վերջանալուց հետո, բժիշկը  
հիշեցրեց յերեխաններին, վոր միկրոբներն  
ապրում են կեղտոտության մեջ և առաջար-  
կեց բոլորին տուն գնալուց առաջ լվանալ  
ձեռքերն ոճառով։

Միուս անգամ, —ասաց բժիշկը, հե-  
ռանալով, —բարի յեկեք պարապմունքի դալ

մաքուր ձեռքերով և վոչ վոք ձեզանից յեր-  
կար և կեղտոտ յեղունգներ չունենա։

Յերեխաններն ամաչելով նայեցին իրենց  
կեղտոտված ձեռքերին և լվացաբանի ա-  
ռաջ հերթի շարպեցին։

Հենց այսաեղ վորոշեցին կուեկտիվում  
ունենալ չորս հոգուց բաղկացած սանիտա-  
րական պոստ։

### ՅԵՐԻՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԽԵՆԱԳԵ ոգնություն ցույց տալ ջարդվածների դեպ-  
քում

Հիվանդանոցում յերեխանները միայն  
այն ժամանակ հիշեցին ձեռքերը լվանալու-  
և յեղունգներ կտրելու պայմանի մասին,  
յերբ արգեն սպիտակ խալաթներ ելին հա-  
գել և բժիշկը առաջարկել եր նրանց շարք  
կանգնել և մեկնել ձեռքերն առաջ։ Մի  
ըսպեցի իրարանցումից և լոռությունից հետո  
լվեցին։

—Մոռացել ենք, ըսկեր բժիշկ, մոռա-  
ցել ենք։

— ԴԵ, տեսեք, միուս անգամ բոլորիդ  
ձեռքերը պետք ե մաքուր լինեն, իսկ հիմա  
նախ և առաջ գնանք լվացվելու։ Ձեռքերը  
լվանալուց հետո, յերեխաներն անցան վի-  
րակապության սենյակը։

Սեղանի վրա պառկած եր մոտ 15 տա-  
րեկան մի տղա։ Մայրապետն զգուշությամբ  
փորձում եր հանել նրա աջ վոտքի կոշիկը։  
Զախ, առողջ վոտքից կոշիկն արգեն հան-  
ված եր։ Տղան պառկած, առամներն իրար  
սեղմած, տնքում եր։

Պարզվեց, վոր տղան չմուշկներով սա-  
հելիս, վազել ե ընկերոջ յետեկից, սայթաքել  
և ընկել։ Ինքը չի կարողացել վեր կենալ.  
Նրան ոգնության ե յեկել կարմիր Խաչի  
պատգարակավորների հերթապահ խմբակը,  
պառկեցրել պատգարակի վրա և շտապ  
ոգնության կառքով փոխադրել հիվանդա-  
նոց։ Թե ինչ ե պատահել նրան, գեռես  
պարզված չեր։

Վորովհետեւ կոշիկը չեր հանվում, ուստի  
բժիշկը կարգադրեց կտրել կոշիկի ճիշքի

կարերը։ Դրանից հետո կոշիկը հեշտու-  
թյամբ հանվեց։ Ապա հանեցին անդրա-  
վարտիկը նախ առողջ, ապա հիվանդ վոտ-  
քից։ Յերբ սպիտակեղենը հանեցին, բոլորի  
ուշագրությունը գրավեց աջ սրունքի ծուռ  
դրությունը։ Նույնիսկ պիտներների համար  
պարզ եր, վոր վոսկը կոտրված ե։ Կոտըր-  
ված վոտքի շոշափումն ամեն անգամ ու-  
ժեղ ցավ եր առաջ բերում։ Հիվանդ վոտքը  
առողջից կարճ եր։

— Այդ նրանից ե, — ասաց բժիշկը, — վոր  
մկաններն ընդունակ լինելով կծկվելու,  
վոսկը կոտրված ծայրերը ձգել են գեպի  
իրար և սրունքը կարճացել ե։ Այդպես եր  
և Միշայի վոտքը։

— Ի՞նչ պետք ե անել հիմա, — հարցրեց  
յերեխաներից մեկը։

— Նախ և առաջ, — պատասխանեց բը-  
ժիշկը, — պետք ե կոտրված վոսկորներն  
ուղղել, վորպեսզի նրանք իրենց նախկին  
գրությունը ունենան։ Դրա համար ոգնա-  
կանը պետք ե վոտքը ծնկում ամուր պա-

հի, իսկ ոգնություն ցուց տվողը գտուշությամբ ձգի վոտքը դեպի իրեն։ Վոտքը հարկավոր է ձգել ուղիղ գծով, վորպեսզի վոսկրի սուր ծալրերով շրջապատող մկանները և այլ որդանները չվիրավորվեն։

Հակառակ սպասումին, հիվանդը, յերբ վոտքն ուղղում ելին, լուռ եր։ Բժիշկը ձգում եր ուղիղ և մեծ զգուշությամբ։ Յերեխաները հետեւում ելին, թե ինչպես դեպի կողմ ցցված ներքեմ վոսկրն աստիճանաբար յետ եր քաշվում, ընդունելով ուղիղ դիրք և վերջապես իր կոտրված ծալրով կանգնեց վերևի ծալրի դիմաց։

Յերբ բժիշկը դադարեց քաշելուց, տղան թեթև հառաջեց և հետո հանգստացավ։ Հիվանդ վոտքն առողջ վոտքի ձև ստացավ։ —Իսկ հետո ի՞նչ անել, —հարցրին յերեխաները։

—Հետո, կոտրված վոսկորներն այնպես պետք է ամրացնել, վոր կտորները տեղից չշարժվեն։ Դրա համար գործ են ածվում բեկականեր։ Բեկակալի վոխարեն կարելի յե-

գործածել վորևէ ամուռ իր։ Անհրաժեշտ է միայն, վոր նա ընդգրկի ամբողջ կոտրած



Նկ. 12. Բեկակալ փայտերից.

վոտքը և յերկու ծալրերում գտնվող հողերը վոսկորները լինում են կարճ և յերկար

Այդ պատճառով ել բեկակաները ուետք ե  
համապատասխանեն վոսկը յերկարու-  
թյանը: Բեկակալ կարելի յէ պատրաստել  
կարունից, ծառի կեղկեց կամ ֆաներայից:  
Բեկակալը կարելի յէ փոխարինել փայտով,  
ձեռնափայտով, քանոնով: Պատերազմի  
գաշտում՝ հրացանով, սվինով, դաշույնի  
պատյանով, տանը՝ ձեռնափայտով, քանո-  
նով, անտառում՝ ծառի ճյուղերով, կեղե-  
վով, դաշտում՝ խոտի խուրձերով և այլն:

Հիվանդանոցի համար բեկակալը պատ-  
րաստվում ե լարերից կամ փայտից: Յեթե  
կոտրվածքը առաջ ե յեկել այնպիսի պայ-  
մաններում, վոր ձեռքի տակ վոչինչ չկա,  
այդ գեղքում կարելի յէ բեկակալի փոխա-  
րեն հիվանդ վոտքը կապել առողջ վոտքին,  
վնասված ձեռքը ամրացնել մարմնին: Հի-  
վանդանոցներում, բացի բեկակալից, գործ  
են ածվում գիպսի և ոսլայի վիրակապներ:  
Գիպսի փոշիով կամ ոսլայով ներծծված բին-  
տերը թրջում են լեռնան ջրի մեջ և նրան-  
ցով փաթաթում կոտրված մասը: Գիպսը և


ուլան չորանալով ամրանում են և ստաց-  
վում ե ամուր մուշտակ, վորն իր մեջ  
պահպանում ե կոտրած վոսկը: Այդպիսի  
գիպսե բեկակալ ե դրված Միշալի վոտ-  
քին:

Նախ քան բեկակալը մարմնի վրա հագց-  
նելը, պետք ե հոգ տանել, վոր մաշկը  
չսղմվի: Յեթե մաշկը տրորվում ե բեկա-  
կալի և վոսկը արանքում, անզգայնում  
ե, մահանում, վերքեր են առաջ գալիս:  
Վորպեսզի վերքեր չառաջանան, ան-  
հրաժեշտ ե վոտքը կամ բեկակալը փաթա-  
թել փափուկ բամբակի մեջ: Ինչպես ցուց  
ե տրված 11-րդ նկարու: Բեկակալը վեր-  
քի վրա դնելուց հետո (այսինքն առնելով  
բեկակալի մեջ սրունքի կոտրած վոսկոր-  
ները, ծնկի և սրունքի հողերը), պետք ե  
այդ բինտով ամրացնել: Բեկակալների մեջ  
սղմված, կոտրված վոսկը ներն անշարժ դը-  
րություն են ստանում և 20-30 որվա ըն-  
թացքում կպչում են: Յեթե կոտրած վոտ-  
քը պատռել ե մաշկը, կամ չառաջախվել

Եռումքի կտորներով, գնդակով, ալոպիսի  
բեկումը կոչվում է բաց բեկում:

—Իսկ վորն ե վատ՝ փակ, թե բաց  
բեկումը,— հարցրեց յերեխաներից մեկը:

—Ինարկե բացը, վորովհետև մանրե-  
ները հեշտությամբ անցնում են վերքի  
մեջ և վարակում նրան:



Նկ. 13. Փակ յեվ բաց բեկում.

—Ի՞նչ պետք ե անել բաց բեկման  
դեպքում։

Առաջ վերքը կապել, ինչպես սովորա-  
կան վերքը, խակ հետո բեկակալն ամրացնել։

—Այժմ գնանք Միշալի մոտ, —ասաց

Բժիշկը, —տեսնենք, թե ի՞նչպես ե զգում  
իրեն և ի՞նչպես ե կպել նրա գիպսե բեկա-  
կալը։ Դրանից հետո կղնանք լաբորատորիա  
և վիրակապության փորձեր կանենք։

Զմուռնաք լվանալ ձեր ձեռքերը և կըտ-  
րել յեղունգները։

—Վո՞չ, վո՞չ, չենք մոռանա։

Յերք յերեխաները տուն ելին վերա-  
դառնում, փողոցում յեղած փայտի կտոր-  
ները, տախտակները, յերեխաներին իս-  
կույն հիշեցնում ելին, վոր նրանց կարելի  
յե ոգտագործել բեկակալի փոխարեն։

Տանը յերեխաները մկրատ խնդրեցին,  
կտրեցին իրենց յեղունգները և այդ որվա-  
նից անլվա ձեռքերով սեղանի առաջ չելին  
նստում և անկողին մտնելուց առաջ ան-  
պայման լվանում ելին վոտքերը։

## ԶՈՐՅՈՒԹ ԶՐԱԽՅՅ

Ինչպես ոգնել ուսագնացության գեպիում

—Բժիշկ, նայեցեք, մեր ձեռքերը մա-  
քուր են և յեղունգները կտրած, —ձում

Ելին յերեխաները ձեռքերը առաջ պարագելով:

—Ապրեք, յերեխաներ, չեք մոռացել  
—դովեց բժիշկը: Այդ մասին չմոռանաք և  
պարապմունքներն ավարտելուց հետո: Այ-  
սոր մենք պետք ե սովորենք ցուց տալ  
առաջին ողնությունը ուշագնացություն  
դեպքում: Հիշում եք. յես ձեզ սկզբում ա-  
սեցի, վոր Միշան, ընկնելով ավտոմոբիլի  
տակ, ցավից և ահից կորցրեց դիտակցու-  
թյունը: Սախաված ելին նրան ուշի բերել:  
Ի՞նչպես արեցին այդ:

—Ոձիքը թուլացրին:  
—Յերեսին սառը ջուր լցրին:  
—Ողանցքը բացեցին:  
—Նաշատիրի սպիրտ տվեցին հոտ քա-  
շելու...

—Ճիշտ ե, ճիշտ ե,—ասաց բժիշկը.  
—այդ բոլորն արված ե—և Միշան աչքերը  
բացեց: Նրան ջուր տվին: Իսկ ինչու հա-  
մար են թուլացնում ոձիքը, գոտին և բաց  
անում ողանցքը:

—Վորպեսզի հիվանդին թարմ ողի հո-  
սանք հասնի, վորպեսզի Միշան ազատ  
շնչի:

—Ճիշտ ե: Այդպիսի ուշագնացություն  
պատահում ե և աշխատանքի ժամանակ,  
յերբ տոթ ու շոգ ե լինում: Այդպիսի դեպ-  
քում մարդիկ կորցնում են հավասարակըշ-  
ուությունը, տատանվում են և ընկնում  
անզգա, յերբեմն յերկար ժամանակ ուշքի  
չեն գալիս, թուլ են շնչում:

—Բժիշկ, բժիշկ, ողնեցեք խեղդվա-  
ծին,—ճշացին լուսանուտից (բժիշկը յերե-  
խաների հետ պարապում եր գետափի ա-  
կումքում):


Բժիշկը յերեխաների հետ, արագ դուրս  
վազեց փողոց և տեսավ մի խումբ մարդիկ:  
Խեղդվածին արդեն ողնություն ելին ցուց  
տալիս կարմիր Խաչի սանիտարական պու-  
տից հասած հերթապահները:

Բժիշկը պահանջեց միլիցիոներից ցըել  
բոլորին և սկսեց զեկավարել առաջին ողնու-  
թյուն ցուց տվողներին: Խմբակի անդամները

հանեցին վերաբկուն և կոշիկները, թու-  
լացըին ոճիքն ուղղոտին:  
Բժիշկը հրահանդեց.

Փորը հենել ծնկին, գլուխը ցած:


Այդ արվում ե նրա համար, վոր ջուրը



Նկ. 14. Առաջին ոգնուրյուն խեղնվողին.

Թափվի շնչափողից, —բացատրեց բժիշկը:  
Պառկեցնել փորն ի վար վերաբկի վրա,  
գլուխը ձեռքերի վրա գեմքը շրջել կողմ:  
Յեթեսիրար խառնի, փախած մասերն ա-  
զատ կթափվեն ու շնչափողը չեն ընկնի:


Սանիտարական պոստի ողակավարը  
հարմար գիրք ընդունեց, արհեստական շըն-  
շառություն սկսելու նպատակով և առանց  
կարգադրության սպասելու, սկսեց ձեռքե-  
րով մեկ սեղմել կրծքի վանդակը, մեկ  
ձեռքերը յետ քաշել:



Նկ. 15. Արհեստական օնչառուրյուն լա Շեֆերի.

—Յերբ նա սեղմում ե կրծքի վան-  
դակը, —բացատրեց բժիշկը, —ողը դուրս ե:  
դալիս թոքերից, —դա արտաօնումն ե:  
Յերբ դադարում ե սեղմել կրծքի վանդակը,  
կրծողերը ուղղվում են; կրծքի վանդակի  
տարածությունը լայնանում ե և ողը մըտ-

նում ե թռքերի մեջ—դա ներշնչումն է:  
Ուրեմն մենք արհեստական կերպով նոր-  
մալ շնչառություն ենք կատարում: Ներշն-  
չումն ու արտաշնչումը պետք ե կատար-  
վեն մեկ րոպեյում այնքան անգամ, վոր-  
քան շնչում ե մարդը հանգիստ դրությամբ:




Նկ. 16. Արհեստական շնչառություն բա Շեֆերի

—Իսկ մի րոպեյում քանի անգամ ե  
շնչում մարդը,—հարցը յերեխաներից  
մեկը:

—Վաթոնն, —պատասխանեց մյուսը:  
—Վո՞չ, —ասաց բժիշկը, —այդպես արագ  
շնչում ե միայն շունը, այն ել տաք յեղա-

նակին, լեզուն հանած վազելիս: Այդպես  
արագ շնչում ե և նորածին յերեխան, իսկ  
մեծահասակ մարդիկ մի րոպեյում 16—18  
անգամ են շնչում: Այդ արագությամբ



Նկ. 17. Արհեստական շնչառություն բա Սիլվեստրի.

պետք ե կատարել և արհեստական շնչա-  
ռությունը:

Այդ ժամանակ խեղդվելուց ազատվածն

սկսեց շնչել, բայց շնչառությունը կարճ եր, վոչ խոր և հաճախ կանգ եր առնում:

Արհեստական շնչառությունը պետք ե շարունակել:

Անցավ ևս 10 ըոպե: Հիվանդն սկսեց ավելի խորը շնչել:

Այդ ժամանակ մոտեցավ շտապ ոգնության կառքը և հիվանդին տարավ հիվանդանոց:

Վերադառնալով ակումբ, բժիշկը յերեխաներին ցուց տվեց, թե ինչպես պետք է կատարել արհեստական շնչառությունն ըստ Սիլվեստրի:

Այդ պարապմունքը վերջացավ արհեստական շնչառության վարժություններ կատարելով, վիրակապ դնելով, սեղման և բեկակալ փորձելով:

—Մյուս անգամ կսովորենք, թե ինչպես ցուց տալ առաջին ոգնությունը թունավորող նյութերից վնասվելու դեպքում:

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Խնչպես ցաւյց տալ առաջին ոգնությունը բունավորող ցյուրերից վետավերու դեպքում

Այդ պարապմունքի համար բժիշկը պատրաստել եր հակագաղ և տախտակի վրա ամրացրած ապակյա փոքր սրվակ-ներ, լցված զանազան հեղուկներով և փոշիներով: Նրանցից մի քանիսը դատարկի տպավորություն ելին թողնում:

—Այն, ինչ վոր մինչև հիմա սովորել ենք, կարող ե ձեզնից լուրաքանչյուրին հարկավորվել թե ձեր ընտանիքում և թե ձեր ընկերոջը ոգնելու դեպքում: Բայց սպասվելիք պատերազմի ժամանակ, բացի թնդանոթային կրակից, մեր հակառակորդն անկասկած գործ ե ածելու նաև թունավորող նյութեր:


1914—18 թվերի իմպերիալիստական պատերազմի ժամանակ, հակառակ խաղաղ ժամանակ կնքված պարմանադրի, գերմանացիները 1915 թվին՝ առաջին անգամ,

ֆրանսիական ճակատամասերում, քլոր  
գաղի ահագին հոսանք են բաց թողել: Քլորը  
դեղնաւկանաշավուն գույնի գաղ ե, ողից  
ծանր, վոր փոփում ե գետնի վրա: Սովո-  
րաբար արձակվում ե բալոններից, վորոնց  
մեջ, խոշոր ճնշման տակ, քլորը գտնվում  
ե հեղուկ վիճակում: Քլորի այդ հոսանքից  
վոչնչացել ե մի ամբողջ ֆրանսիական դի-  
վիզիա: Ֆրանսիացիները և անգլիացիները  
պարտքի տակ չմնացին և իրենց հերթին  
նույնպես սկսեցին զանազան թունավորող  
նյութեր արտադրել: Հետագայում թունա-  
վորող նյութերը գործադրվում ելին կամ  
գազային ռումբերի ձեռվ, կամ քիմիական  
ռումբերի, վորոնք նետվում ելին ողանա-  
վերից: Պատերազմի վերջում հայտնի յեր  
մոտ 50 տեսակի զանազան թունավորող  
նյութեր: Ներկայումս դրանց թիվը  
հազարից անցնում ե: Վորպեսդի իմանաք,  
թե ինչ ոգնություն պետք ե ցուց տալ  
թունավորող նյութերից վնասվածին,  
անհրաժեշտ ե իմանալ թունավորող  
նյութերի ազգեցությունը մարդու վրա:

Իրենց ներգործությամբ մեզ հայտնի գա-  
ղերը բաժանվում են հինգ խմբի:  
Առաջին խումբ.—հեղձուցիչ թունա-  
վորող նյութեր: Դրանց պատկանում են  
հետևյալ գաղերը. յոր, վորի նասին արդեն  
ասեցինք և Յոսպին: Յոսպինն ել գաղ ե,  
անդուն և պարզ, այդ պատճառով ել  
Փոսդինով լցված սրվակը դատարկի տպա-  
գորություն ե թողնում: Այդ գաղերը շըն-  
չառության ժամանակ անցնում են թոքերի  
մեջ, խեղդում են և ուժեղ հազ են առաջըե-  
րում: Այդ պատճառով ել սրանք կոչվում  
են նեղնուցիչ: Այդ գաղերից պաշտպան-  
վելու համար, պետք ե դեմքին անցկաց-  
նել հակագագ:

Բժիշկը մանրամասն պատճեց, թե ինչ-  
պես ողավել հակագագից, ինչպես հանել  
պայուսակից ուսինե դիմակը, ստուգել  
սրա փչացած լինել-չլինելը, ինչպես անց  
կացնել, հանել, չորացնել և նորից դնել  
պայուսակի մեջ: Յեթե հակագագ չկա,  
քլորից և Փոսդինից կարելի յե մասնակի

պաշտպանվել շնչելով վորհե թաց կտորի  
մեջ։ Ծալրահեղ դեպքում վերարկուն կամ



Նկ. 18. Հակագոյն.

հակագազը կարգի չի բերված, թունավոր-  
ված մարդը կարող է կողցնել գիտակցու-  
թյունը և լեթե նրան արագ դուրս չըերեն  
թունավորված ողից, կամ հակագոյն չհագ-  
ցընեն, կարող է մեռնել։



Նկ. 19. Ինչպես անցկացնել հակագոյն.

Առաջին ոգնությունը ցուց տալիս,  
անհրաժեշտ է թունավորվածին լանձիջա-  
պես դուրս բերել մաքուր ող կամ գազա-

պաստարան, այսինքն մի շենք, վորն այնպես ե կառուցված, վոր գաղերն այնտեղ անցնել չեն կարող: Այնտեղ պետք ե հանել հիվանդի վերաբերուն, վերնազգեստը, վորովհետև նրանց մեջ ծծված գաղը գուրշիներով, կթունավորի ողը:

Քլորով թունավորվածը թթվածինի պակասություն ե զգում: Դրա համար նրան պետք ե հնարավորություն տալ թթվածին շնչելու հատուկ թթվածնի բարձերից, վորոնց կցված ե խողովակ՝ շնչառության համար:

Սլդպիսի թունավորվածներին արհեստական շնչառություն տալ չի կարելի, վոր առանց այն ել վնասված թոքերը չվնասվեն:

Ֆոսգինը վահնգավոր ե այն պատճառվ, վոր նրա հետևանքներն իսկույն չեն պարզվում, այլ վորոշ ժամանակամիջոցից հետո—մոտավորապես 48 ժամից հետո: Ալդպիսի թունավորվածներին, լեթե նույնիսկ իրենց լավ զգան, պետք ե արգելել

ֆիզիկական վորեւ աշխատանք կատարել: Առաջին 30—40 ժամվա ընթացքում նրանց անհրաժեշտ ե լրիվ հանգստություն, նույնիսկ քայլել չի կարելի:

Յերկրորդ խումբ.—արտասվաբեր զագեր: Դրանց թվին են պատկանում բրութինգել—զիանիթը (բյուրեղիկներ), էլուպիկրեն (հեղուկ) և այլն: Այդ գաղերը լըցնում են թնդանոթների ոտամբերի մեջ: Պայմանական հետո թունավոր նյութերը գուրշու կամ գաղացին դրություն են ստանում: Ընկնելով աչքի մեջ, թունավոր նյութերն առաջ են բերում արտասուք և ուժեղ աչքացավ: Այդ վիճակում մարդն աշխատել չի կարող:

Պետք ե հիշեցնել ձեզ, վոր այդ գաղերը բուրժուական պետությունները գործադրում են հեղափոխական պրոլետարիատի ցուցերը ցրելու նպատակով:

Արտասվաբեր նյութերից կարելի յեպաշտպանվել հակադադ հագնելով: Այդ նյութով թունավորվածներին հարկավոր ե

բուրս բերել թունավորված շըջանից և  
աշքերը լվանալ սոդաիի լուծույթով (1 թե-  
ի գդալ մեկ բաժակ ջրին), կալել պեր-  
մանգանի (մեկ բյուրեղիկ մի բաժակ ջրին),  
կամ մաքուր տաք ջրով։

Յերրորդ խումբ.—թունավոր նյութեր։  
Սրանք այդպես են կոչվում ուժեղ թունա-  
վոր հատկություն ունենալու պատճառով։  
Դրանք են ածխածնի թթվուտ և կապտա-  
թթու։ Ածխածնի թթվուտը պարզ գազ ե։  
Այն ողը, վորի մեջ ածխածնի թթվուտը  
համնում է յերկու տոկոսի, 15 լոպելիք  
հետո, մահ է առաջ բերում։ Կապտաթթունը  
սպիտակ պարզ հեղուկ է, վորից նշանուր  
է գալիս։ Կապտաթթվի մեկ կաթիլը բա-  
վական է, վոր սպանի աղավնուն, յերկու  
կաթիլը սպանում է շանը, յերեք-չորսը՝  
մարդուն։ Այդ նյութերը շուտ անհայտա-  
նում են, ցնդում ողի մեջ։ Նրանք կու-  
տակվել չեն կարող։ Անցլալ պատերազմի  
ժամանակ կապտաթթուն գործ եր ածվում։  
Թունավոր նյութերից պաշտպանվելու

համար, հակագաղի մեջ տեղավորվում են  
հատուկ քիմիական նյութեր, վորոնք ան-  
վընառ են դարձնում թունավոր նյութերը։  
Թունավոր նյութերով թեթև թունա-  
վորվածին առանձին ոգնություն հարկա-  
վոր չե։ Գլխացավը և փախուժն անցնում են  
իրենք իրենց, իեթե թունավորվածը ժա-  
մանակին մաքուր ոդ գուրս բերվի։ Թու-  
նավոր նյութով թունավորվածին կարելի  
յե շնչել տալ նաշատիրի սպիրուտ։

Յեթե թունավորումն ուժեղ է, թունա-  
վորվածը կորցրել ե գիտակցությունը և  
թուլ է շնչում, նրան պետք ե ոգնու-  
թյուն ցուց տալ այնպես, ինչպես ուշա-  
գնացության դեպքում (թուլացնել ոճիքը,  
գոտին, թարմ ողի հոսանքը ապահովել  
թթվածին շնչել տալ արհեստական շնչա-  
ռու թյուն կատարել և ալն)։

Այս բոլորը մենք կարող ենք կատարել  
և այսոր նորից կկրկնենք։  
Չորրորդ խումբ.—մաելը թշեցնող, բա-  
րախ առաջ բերող խումբն ե։ Բշեցնող

Նցութերին ե պատկանում իպրիսը: Դա  
դարչնագույն հեղուկ ե, մանանեխի հոտով։  
Իր քիմիական բովանդակութբամբ իպրիար  
ծձմբի միավորում ե:  
Յեթե իպրիարի կաթիլն ընկնի մաշկի



Նկ. 20. Խնայես ցանել բուրակիրք բռնավորված փայտեռում-  
վրա, սկզբում չի անհանգստացնի հիվան-  
դին. Վոչ ցավ, վոչ ալրում չի զգացվում։  
10—20 կամ ավելի ժամից հետո, մաշկը  
կարմրում ե, ալրվում, քոր գալիս, հետո

բշտում և նույնիսկ խոցեր են առաջ գա-  
լիս:

Իպրիար ծծվում ե հագուստի մեջ, ա-  
զգուսի, ծառի, հողի և գոլորշիանալով, կա-  
րող ե թունավորել ողբ որերով, իսկ  
ցուցա լեզանակին՝ նույնիսկ շաբաթներով  
և ամիսներով։

Ընկնելով աչքերի մեջ, մի քանի ժա-  
մից առաջ ե բերում կարմրություն, կո-  
պերի ուռուցք, ցավ, լուսավախություն։

Թոքերի մեջ իպրիար առաջ ե բերում  
նույնպիսի փոփոխություն, ինչպիսին և  
մաշկի վրա, այսինքն բշտիկներ, խոցեր և  
ավելի լսոշոր փոփոխություններ՝ թոքերի  
այսուցք (ուռուցք)։

Զի կարելի թուլատրել ոգովել թու-  
նավորված մթնոլորտում գանված ջրից,  
պարենից և կերակրից։ Այն բոլոր առար-  
կաները, վորոնց վրա ընկել ե մնայուն  
թունավորող նույթ, պետք ե յենթարկվեն  
ապագագացման, մետաղյա իրերը լվացվեն  
նավթով, իսկ մրտաները՝ քլորակրով։

Թունավորված պարենը և առարկա-  
ները, վորոնց անհնար ե ապագազացման  
լենթարկել, պետք ե վոչնչացվեն:


Յեթե իպրիտը ջրի, կերակրի կամ  
թուքի հետ ընկնի ստամոքսը, առաջ կը-  
բերի ցավ, արնախառն փշտում և լուծ:  
Ինչպես տեսնում եք, այդ նյութը կարող  
ե վնասել մեր բոլոր որգանները:

Ի՞նչպես պաշտպանվել իպրիտից:

Հակադագով կարելի յե պաշտպանել  
միայն դեմքը և շնչառության որգանները:  
Իսկ ամբողջ մարմնի պաշտպանման համար  
անհրաժեշտ ե հատուկ հագուստ, պատ-  
րաստված լուղած գործվածքից, վորն իպ-  
րիտն իր միջով բաց չի թողնում: Յեթե  
այդպիսի հագուստ չկա, իպրիտից պետք  
ե պաշտպանվել գազապատարանում:

Յեթե մարդ մնացել, ե առանց պաշտ-  
պանողական միջոցների, թեկուզ կարճ  
ժամանակ, իպրիտով թունավորված ողում,  
նրա հագուստը պետք ե հանել, աշխատե-  
լով չկպչել նրան բաց ձեռքերով: Մաշկի

վրայի կաթիլները հեռացնել փայտիկի  
ծալքին փաթաթած բամբակով (ինչպես  
հեռացնում են թանաքի կաթիլը, այսինքն՝  
վոչ թե քսմելով, այլ բամբակն ամեն  
անգամ փոխելով):



Նկ. 21. Ինչպես մայրել իպրիտով բռնավորվելու դեպքում.

Մաքրելով մաշկը թունավորող նյութե-  
րի կաթիլներից, հարկավոր ե խնամքով  
լվանալ մի քանի անգամ վնասված տեղը  
տաք ջրով և ոճառով:

Յեթե ձեռքի տակ կա բենզին կամ

Նավթ, լվանալուց առաջ, մի քանի անգամ  
շփում են վնասված տեղը բենզինով կամ  
նավթով լավ թրջած բամբակով։ Մայուս  
թունավորող նյութերից վնասվածներին  
պետք է ոգնության հասնել հակադադարին  
դիմակով և ոեզինե ձեռնոցներով, իսկ ա-  
վելի լավ է ունենալ հատուկ պաշտպանող  
—ապահովություն։

Բացի իպրիտից կան և այլ նյութեր,  
վորոնք իրենց գործունելութիւնը նման են  
իպրիտին։ Դա լուիզիտն է, վորն առաջին  
անգամ արտադրվել է Ամերիկայում, ին-  
պերիալիստական պատերազմի վերջում։  
Լուիզիտը բաց-գեղին գույնի լուղու հե-  
ղուկ է, խորդինո (մալմուկի), հոտով։ Մաշ-  
կի վրա ընկնելուց 4—5 ժամ հետո, ա-  
ռաջ է բերում կարմրութիւն; բշտիկներ  
և անբռնվելի խոցեր։

ինչպես իպահութեան մասին կատարեած է այս գործութեան մասին առաջարկը:

հողի, ծառի, աղբուսի և հագուստի մեջ։  
Դանդաղ գոլորշիանալով, մի քանի որվա-  
ընթացքում, վարակում ե ուրեմ։ Լուիզիան  
իպրիտից արագ և քայլալիվում։ Առաջին



Նկ. 22. Եցապես մատրել մաշեն իպրիսի կարիլից.

ոգնությունը նույնին է, ինչ վոր իպրիտի  
ժամանակ:

Այրվածքներ.—Բացի թունավորող նյուռ-  
թերից, պատերազմի ժամանակ կարող են  
գործածվել նաև արագ բռնկվող քիմիա-  
կան նյութեր:

Թումբի միջոցով հետված այդպիսի  
թունավոր նյութերը կարող են հրդեհ ա-  
ռաջ բերել և այրվածքների պատճառ  
դառնալ:

Պետք է կարողանալ արագ կերպով  
հազցնել մարդու վրայի այրվող հագուստը:  
Այդ նպատակով անհրաժեշտ է այրվող մա-  
սի վրա գցել վերաբերու, կամ պարկ և  
սեղմել այն տեղը վորն այրվում եւ: Այդ-  
պիսով այրվող տեղը կղրկվի թարմ ողի  
հոսանքից և բոցը կհանգչի:

Մխող հագուստը պետք է հանդցնել  
թաց շորի միջոցով: Վառվող նյութերից  
գործ է ածվում ֆումիորը: Ֆումիորը վառ-  
վում է ջրի տակ, այդ պատճառով եւ  
հանդցնելու համար գործ է ածվում վոչ  
թե ջուր, այլ պղնձարջասպի 5 տոկոսանոց  
լուծվածք:

Վերջացնելով մեր պարապմունքը, —ա-  
սաց բժիշկը. —Եկեք կրկնենք վիրակա-  
պության հիմնական ձևերը (վիրակապ, սեղ-  
ման, բեկակալ, արհեստական շնչառու-

թյուն) ստուգենք՝ գիտենք արդյոք հակա-  
գագ գործածելը, ինչքան ժամանակ կարող  
ենք մնալ հակագազով, ինչպես պետք ե-  
ցուց տալ առաջին ոգնությունը թունա-  
վոր նյութերից վասակածին:

—Ըսկեր բժիշկ, —ասաց կորարը, —մեր  
խմբակը վորոշել ե վերածվել գրուժինալի,  
վորպեսզի վոչ թե մոռանանք մեր սովո-  
րածը, այլ ընդհակառակը՝ մեր ստացած  
գիտելիքները գործնականում կարողանանք  
ոգտագործել: Մեր խմբակը կազ կպահպա-  
սի կարմիր Խաչի կոմիտեից հետ և անհրա-  
ժեշտ աշխատանքներ կկատարի:

—Դուք պետք է ձեռք բերեք դեղարկ-  
ողիկ կորեկտիվի համար, —ասաց բժիշկը:  
Դեղարկղիկը պետք է պահել փակ և բա-  
նալին հանձնել հերթապահին: Դեղարկղիկի  
մեջ պետք է լինեն հետեւյալ դեղորայքը և  
գործիքները.

1. Վալերիանի կաթիլներ 15 գրամ (10-  
12 կաթիլ ուշագնացութբան դեպքում):

2. Լուծողական 100 գրամ (մեկ ճաշի  
գդալ մեկ անգամից):
3. Խինին 0,2—0,25 գրամ (1 տարբեր-  
կա ջերմելուց առաջ):
4. Յող 15 գր. (քսել վերքի շուրջը):
5. Եաշատիրի սպիրա 15 գր. (կաթեցնել  
թաշկինակին, կամ շնչել տալ խցանից):
6. Վազելին 50 գր.:
7. Յուղած թուղթ 6 թերթ (կոմպրեսի  
համար):
8. Բաժակ, գեղ խմեցնելու համար:
9. Բորաթթու 15 գր. (1 թերթ գդալ մեկ  
բաժակ ջրին):
10. Անհատական ծրար 10—12 հատ:
11. Սպիտակ բամբակ 100 գր.:
12. Բինտեր նեղ և լայն 12 հատ:
13. Յեղունգների խողանակ 1 հատ:
14. Փոքր մկրատ 1 հատ:
15. Զեռքի ոճառ 1 »:
16. Բենզին 50—100 գր.:
17. Բեկակալ 2—3 հատ:
18. Հասարակ բամբակ 400 գր.:

19. Չամբարներ 3—4 հատ:
  20. Սեղման (ժղուած) 2 հատ:
  21. Անդլիական գնդասեղ 12 հատ:
  22. Սլբիչ 1 հատ:
  23. Լուցկի և մոմ:
  24. Սողա 300 գրամ:
  25. Ուլս 200 » :
  26. Ջրածնաթթու 15 գրամ:
  27. Ֆլյաժկա 1 հատ:
  28. Կալիչ պերմանգան 10—15 գր.:
- Այս բոլորը կարելի յե պահել և պա-  
տուակի մեջ: Եքսկուրսիա կամ արշավի  
գնալիս, դուք ձեզ հետ կվերցնեք պայու-  
սակը և ձեր ընկերներին տեղում առաջին  
ողնություն ցույց կտաք: Այդ պայտասակը  
ձեզ պետք կգա և ճամբարում:
- Ինչ վերաբերում ե Միշային, վորը  
պատճառ գարձավ ինձ ձեզ հետ ծանոթա-  
նալուն, 9 որից հետո արդեն դուքս ե  
գալու հիվանդանոցից: Հույս ունեմ, վոր  
ձեր կողեկտիվում այլևս նման թյուրիմա-  
ցություններ չեն պատահի:

## ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Գարուն եր:

«Կարմիր աստղ» պիոներական կոլեկտիվը պատրաստվում էր ճամբար մեկնելու։ Բժշկական քննություններն սկսվել ելին։

Ավագ կոլվարը հրավիրել էր ծնողների, պիոներական ակտիվի, կոլվարների, և մանկավարժների խորհրդակցություն ճամբարի հարցերի շուրջը։ Այդ խորհրդակցության հրավիրված էր նաև «Կարմիր աստղ» կոլեկտիվի բարեկառ բժիշկը։

Պիոներները նստած ելին դահլիճի մեջ կողմում, ծնողները՝ մյուս։ Բժշկին առաջնը Միշան Շտեսավ։ Նա արդեն հաճախում էր դպրոց և կոլեկտիվ։

Յերեխաները շրջապատեցին բժշկին։  
—Դուք մեզ հետ ճամբար կդար, թե վոչ։

—Վո՞ր բժիշկն ե դալու մեզ հետ։

—Ինչու դուք չեք դալիս։

—Սպասեցեք, սպասեցեք, նախ թույլ տվեք ինձ ստուգել թե դուք կատարում եք ձեր խոստումը։ Շարք կանգնեցեք և ցույց տվեք ձեր ձեռքերը։

Յերեխաները վստահ կերպով շարք կանգնեցին և ձեռքերն առաջ պարզեցին։

Բժիշկը դոհ մնաց։ Բայց անսպասելի կերպով մոտեցավ և սկսեց ստուգել նրանց մազերը և հագուստի մաքրությունը։ Յերեխաներից մի քանիսը կարմրեցին, շփոթվեցին։

—Յերեխաներ, յերեսում ե, վոր չեք մոռացել իմ խորհուրդները, բայց 2—3 հոգու մազերը կեղտոտ են, մեջը միջատներ կան։ Ի՞նչ եք կարծում, կարել՞ յե այդպիսի յերեխաներին ճամբար տանել։

—Մենք խոսք ենք տալիս մինչև ճամբար գնալը մաքրվել, ճշացին յերեխաները։

—Լավ։ Ճամբար գնալիս յես նորից կստուգեմ։ Իսկ այժմ յեկեք խոսենք մի

65

Պիոներները յեվ առաջին ոգնույունը—5.

ալ կարևոր հարցի մասին։ Նախքան ճամբար մեկնելը, դուք պետք ե իմանաք, թե ի՞նչպիսի գժբախտ զեպքեր կարող են պատահել այնտեղ և ինչպես պետք ե ոգնել այդ զեպքերում։ Դրա համար մենք պետք ենորից 2—3 անգա հավաքվենք և լրացնենք մեր իմացածը։

Յերեխաներն ուրախացան և վորոշեցին հունիսի ընթացքում ունենալ 3 պարապմունք ևա։

### Ա.Ռ.ՋԻՆ ԶԲՈՒՅՑ

ինչպես ոգնել արեվահարին յեվ ջերմահարին

—Դուք յերկի չեք մոռացել իմ ասածը ուշագնացության մասին։ Զեղնից ով կարող ե ասել, թե ի՞նչ զեպքերում կարող ե ուշագնացություն պատահել։

—Աշխատանքի ժամանակ։

—Շոգ յեղանակին։

—Տաքությունից, յերբ շենքում շատ մարդ ե հավաքվում։

—Բաղնիքում ել կարող են ուշաթափվել։

—Իսկ ճամբարի կյանքում ի՞նչից կարող ե սւշագնացություն պատահել։ Հարցրեց բժիշկը։

—Արևահարությունից, —պատասխանեցին յերեխաները միաբերան։

—Ճիշտ ե, բայց ի՞նչ ե նշանակում արևահարություն և ի՞նչպես ե պատահում այդ։ Յեթե դուք ճամբարում յերկար ժամանակ գլխաբաց ման գաք, արևի տակ վորեւ աշխատանք կատարեք, կամ արևի վաննա ընդունելիս անզգուշ լինեք, կարող ե ուշագնացություն առաջ գալ։ Թե զբա առաջն ի՞նչպես առնել, դուք յերեկ արդեն գիտեք։

—Սպիտակ շոր գցել գլխին, կամ սպիտակ գլխարկ դնել։

—Ճիշտ ե։ Արևի տակ գլխաբաց մնալու դեպքում, արեգակի ճառագալթներն աղջում են գլխի վրա, յերակները լայնանում են, և արյունն առատ կերպով

շարժվում ե դեպի գլուխը։ Դրանից առաջ  
ե գալիս գլխացավ, գլխալուր և յեթե  
միջոցներ ձեռք չառնվեն, ուշագնացու-  
թուն և նույնիսկ մահ։ Այդ ժամանակ  
վասվածի դեմքը կարմրում ե և նույնիսկ  
կապտում։ Պատահում ե և այլ կերպ. արե-  
գակը չի յերեսում, յեղանակը շոդ ե, խա-  
ղաղ, քամի չկա, տոթ ե և ողը խեղող։  
Այդպիսի յեղանակին առաջ ե գալիս ջեր-  
մահարություն։ Ընդհանրապես, աշխատան-  
քի ժամանակ, մարդիկ միշտ տաքություն  
են արտադրում, իսկ տաք յեղանակին ա-  
վելի դժվար ե արտադրվում տաքությունը։  
Պատահում ե, յերբ բոլորովին դադարում  
են տաքություն արտադրելուց։ Այդ դեպ-  
քում մարմինն ուժեղ կերպով տաքանում  
ե, շունչը կտրվում, սրտի գործունեցու-  
թյունը խանգարվում, մարդ կորցնում ե  
զիտակցությունը և անգդա ընկնում։

Այդպիսի դեպքում հիվանդին պետք ե  
անմիջապես ստվերոտ վայր տեղափոխել,  
հանել վրայի ծանրությունը, հագուստը,

թուլացնել ոճիքը, գոտին, պառկեցնել  
այնպես, վոր գլխատակը բավականին  
քարձր լինի, վորպեսզի արյունը կարողանա  
հեշտությամբ ցած իջնել. կրծքին, գլխին  
սառը ջուր լցնել, սառը ջուր տալ խմելու։  
—Իսկ յեթե հիվանդը ուշքի չեկավ,  
այն ժամանակ ինչ անել։

—Միթե մոռացել եք արհեստական շըն-  
չառության մասին։ Միշտ պետք ե հիշել,  
վոր յեթե հիվանդը չի շնչում, պետք ե  
արհեստական շնչառություն կատարել։  
Բայց կարող ե պատահել, վոր այդ ել չող-  
նի և արևահարը մահանա։ Դրա համար ել  
պետք ե խուսափել այդ տեսակ պատա-  
հարներից։ Այդ նպատակով ամառվա տաք  
որերին գլխաբաց ծանր աշխատանք չպետք  
ե կատարել, հաճախ հանգստանալ և ջուր  
խմել։ Եքսկուրսիա դնալիս ծանր բեռ չը-  
վերցնել, թեթև հագնվել, գլխին սպիտակ  
գլխարկ կամ թեթև փաթաթան ունենալ,  
հաճախ հանգստանալ ստվերի տակ, սեղմ  
շարքերով չքայլել, այլ միմյանցից հեռու։

Յերբ մեկն ու մեկի գլուխը ցավեց, կամ  
դեմքը կարմրեց, պետք ե անմիջապես դա-  
դար տալ նրան, գլուխը սառը ջրով լվա-  
նալ և, յեթե հնարավոր ե, մնացած ձանա-  
պարհը տանել սալով կամ այլ փոխադրա-  
կան միջոցով։ Արևի վաննացի ժամանակ  
գլխին պետք ե սպիտակ շոր կապել, շո-  
րերը, կոշիկները և գուլզաներն անպայման  
հանել, ցանկացած ժամանակ ջուր խմել և,  
յեթե արել շատ ե վառում, գլխի շորը  
սառը ջրում թրջել։

Այդ ըսպեցին դպրոցի բակում աղմուկ  
բարձրացավ։ Բոլորը վագեցին դեպի խո-  
հանոցը։

Յերեխաներից մեկը վագեց դեպի պա-  
րող խմբակը և գոչեց։

— Ոգնեցէք, տնտեսուհին ուշաթափ-  
վել ե։

Բժիշկը յերեխաների հետ դեպի խոհա-  
նոցը գնաց։ Անկյունում թշում եր մեծ  
ինքնալեռը, գետնին ընկած եր տնտեսու-

հին, իսկ յերեխաները շրջապատել ելին  
նրան և չգիտելին ինչպես ողնել։

Բժիշկը բոլորին խոհանոցից դուրս բե-  
րեց և հարց տվեց պիոներներին։

— Դուք վոչ մի հոտ չեք զգում այս-  
տեղ։

Յերեխաներն իսկույն հասկացան։ Նը-  
րանցից մեկը վագեց դեպի ինքնալեռը և  
դարձավ բժիշկ։

— Բժիշկ, ինքնալեռը լիքն ե ածուխով  
և կապույտ բոց ե բարձրանում։

Բժիշկը բոնել եր տնտեսուհու ձեռքը  
և զարկերակն եր շոշափում, հետո թուլաց-  
րեց ոձիքը և գոտին, սառը ջուր պահան-  
ջեց և կարգադրեց բաց անել լուսամուտ-  
ները։ Բժշկի զեկավարությամբ, յերեխա-  
ները թրջեցին սրբիչը սառը ջրում, գցե-  
ցեցին հիվանդի ճակատին և հետեւուն ելին  
նըա շնչառությանը։ Յերբ հիվանդն աշ-  
քերը բացեց, բժիշկը ասաց.

— Այստեղ մենք գործ ունենք ածխածնի  
թթվույտով թեթև թունավորվածի հետ։

Ածխածնի թթվույտը մի դազ ե, վորը հա-  
վաքվում ե սենյակի մեջ, յերբ փայտը  
կամ ածուկը լավ չի վառվել, յերբ ածուկը  
կիսաալրված ե: Այս դազը գույն չունի:  
Ինքնակեռի մեջ բռնկվող կտպույտ կրակն  
ապացուց ե, վոր այդ դազը սենյակում  
կա: Այդպիսի դեպքերում անմիջապես  
պետք ե բաց անել լուսամուտները և դրո-  
ները, ներս թողնել մաքուր ոդ, կամ հի-  
վանդին դուրս բերել մաքուր ոդ: Յեթե  
գիտակցությունը շուտ չվերականգնեց,  
պետք ե արհեստական շնչառություն կա-  
տարել և աշխատել, վոր հիվանդը վորքան  
կարելի յե շուտ շնչի: Այժմ հիվանդին  
պետք ե պառկեցնել 1-2 ժամ և հան-  
գիտ թողնել: Սրանով, յերեխաներ, վեր-  
ջացնենք մեր այս զրույցը, իսկ մյուս դասին  
ներին կամ վիրավորներին:

### ՅԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Թեշպես փոխադրել հիվանդին կամ վիրավորին


Այս անդամ յերեխաները հավաքվեցին  
շտապ ոգնության կայանը:

Բժիշկը ցույց տվեց յերեխաներին պատ-  
գարակը և սկսեց.

—Մեղանից լուրաքանչյուրը պետք ե ի-  
մանա, թե ինչպես պետք ե փոխադրել հիվան-  
դին կամ վիրավորվածին: Դա առավել ևս ան-  
հրաժեշտ է պատերազմի դաշտում, մարտի  
ժամանակ, յերբ մարտիկները ցրված են  
դաշտում, թագնված են մացառուտների  
մեջ, խորդ ու բորդ տեղերում, յերբ թըշ-  
նամու կրակը թույլ չի տալիս մոտեցնել  
բժշկական կայտնը: Յերբ վիրավորները  
շատ են, հրամանատարն իրավունք ունի  
նույնիսկ յերաժիշտներին և բանակացին-  
ներին հրամայել տեղափոխել հիվանդնե-  
րին: Զորամասերում փոխադրելու համար  
կան պատգարակներ: Յերբ վիրավորին  
ոգնողը մի նոգի յե, նա մի ձեռքով վիրա-

Վորին թիակների տակից և բռնում, իսկ  
մյուս ձեռքով ազդըրի տակից, և տեղափո-  
խում:

Ավելի լավ ե, յերբ փոխադրողները  
յերկու հոգի յեն. յերկուսն ել չոքում են



Նկ. 23 Ինչպես տեղափոխել յերկուսով.

Վիրավորի մեկ կողմից և միասին բարձ-  
րացնում:

Շատ հաճախ պատգարակ չի լինում:  
Այդ ժամանակ կարելի յե հիվանդին պառ-  
կեցնել սանդուխքի կամ դռան փեղկի վրա,

փոելով տակը գրատ կամ հարդ: Կարելի  
յե սալլի ճաղերին հաստ կտոր կպցնել,  
վիրավորին վրան դնել և տեղափոխել:  
—Ո՞վ գիտի, ել ինչպես կարելի յե հի-  
վանդին տեղափոխել:



Նկ. 24. Հիվանդին կամ վիրավորին փոխադ. ձեվերից մեկը

—Սալլով, —ձայն ավեց մեկը:  
—Կարելի յե ձիու ուժից ոգտվել:  
—Ավտոմոբիլով, գնացքով:  
—Այդ բոլորը ճիշտ ե, —ասաց բժիշկը,  
—Ճիշտ հիշեցեք, վոր սալլի մեջ պետք ե-

շատ խոտ կամ հարդ փռել և ուղիղ ճանապարհ ընարել, վոր վիրավորի համար հանգիստ լինի: Սնտառում կարելի յէ ծառերի յերկար ճյուղերը հյուսել, վրան շոր գցել և հիվանդին պառկեցնել: Հիշեցեք նույնպես, խորդ ու բորդ տեղերից հեռու պետք է մնալ: Կարելի յէ պարանից, սրբիչներից ողակ գործել և նրանցով փոխադրել հիւանդին: Միջոցներ շատ կան, միայն պետք ե խօսնալ նրանց ոգտագործելու ձևը:

Այդ ժամանակ կայանի առաջ կանգնեց ավտոն և հրդեհաշեջները ներս բերին մի յերեխա, վորի վրա յեղած հագուստի մեծ մասն արված եր: Յերեխաներից մի քանիսը մոտեցան հիվանդին: Բժիշկը առենով, վոր բոլոր յերեխաներն իրենց ուշադրությունն այն կողմն են դարձել, ինքն ել վեր կացավ և մոտեցավ հիվանդին:

Շտապ ոգնության հերթապահ բժիշկը մկրատով կտրտեց յերեխայի շորերը և ըստ զգուշությամբ, առանձին-առանձին

փաթաթել արդեն տեղատեղ բշտած մաշկը բժիշկն սկսեց բացատրել թե ինչպիսի ալրվածքներ են լինում:

— Ալրվածքները Յ աստիճան ունեն: Առաջին աստիճանը կոչվում ե այն, յերբ մաշկը կարմրել ե. յերկըորդը՝ յերբ արդեն բշտել ե և յերրորդը՝ յերբ սեացել ե: Այդպիսի գեղքեր պատահում են և՛ ճամբարում և՛ ձեր ընտանիքում, և՛ ճաշարանում, իսկ ավելի շատ՝ պատերազմի ժամանակակից:

Բոլոր ալրվածքների ժամանակ ե՞լ կրակից, յեռման ջրից, կամ կերակրից, վերքը պետք ե փաթաթել մաքուր բինտով կամ շորով: Շորը կամ բինտը նախորոք պետք ե թրջել վորեւ յուղի մեջ (լուծողական, ձեթ, անալի յուղ, վազելին, սեր և աղն), վորպեսզի վերքին չկպչի և ցավ չպատճառի:

Հենց ալրվելու ակլբում, ալրված տեղն անմիջապես պետք ե թրջել սողալի լուծվածքով, վրան սողա կամ ատամի փոշի

շանել: Ապա, յերեխաներ, ովք կասի՞ ի՞նչ  
դեպքում ե, վոր ջրի ոգնության դիմել չի  
կարելի:

Յերեխաներն իրար յերեսի նալեցին և  
նրանցից մեկը անվստահ, ցած ձայնով  
ասաց.

—Կարծեմ ծծմբաթթվով ալրվելու ժա-  
մանակ:


—Շատ ճիշտ ե,—ասաց բժիշկը: —Ալ-  
պիսի դեպքում վերքի վրա պետք է սողա-  
ցանել, կամ ճարպու շորով փաթաթել:  
Յեթե մաշկի վրա արգեն բշտիկներ կան,  
չպետք է պատռել, վորովհետեւ դրանով  
մանրեների համար ներս մտնելու և արյան  
վարակում առաջ բերելու հնարավորու-  
թյուն է ստեղծվում:

Յերբ յերեխայի բոլոր վերքերը կապ-  
ված ելին, բժիշկը դարձավ յերեխաներին.

—Ալժմ, յեկեք հիվանդին պատղարակի  
վրա դնենք և փոխադրենք դիմացի հիվան-  
դանոցը:

Չորս պիոներ պատղարակի ծալրերից


բռնեցին և զգուշությամբ սանդուխքից  
իջան: —Հիվանդի գլուխը դեպի յետ պահել,



Նկ. 25. Խճապես իջնել սանդուխքից.

առաջ իջեցնել վոտքերը, հետո՝ գլուխը,  
շարժվել միասին, պատղարակը չճոճել:  
Առջեկից գնացող զույգը պատղարակի ծալ-

բերը պետք ե բարձր պահի իրա ուսերին  
հավասար, իսկ յետելի ծալը երից բռնած  
զույգը, ձեռքերը պետք ե իջեցնի այն



Նկ. 26. Խճպես բարձրանալ սանդուխմներով.

չափ, վոր պատգարակը չթեքվի և հիվանդը  
հանգիստ լինի: Յեթե դուք սանդուխքով  
բարձրանալիս լինելիք, պետք ե հակառակը

կատարելիք—առաջ պետք ե բարձրացնելիք  
հիվանդի գլուխը, հետո վոտքերը և, բացի  
այդ, առջելից գնացող զույգը պետք ե  
կախեր ձեռքերը, իսկ յետելից յեկող զույգը  
բարձրացներ պատգարակի ծալը երը մինչև  
ուսը: Մըանով յերեխաներ...

Դեռ խոսքը շվերջացըրած, բժշկին  
խնդրեցին անցնել վիրահատում սենյակը,  
ուր ինչ-վոր բարդ վիրահատում եր կա-  
տարվում: Յերեխաներն ել տուն գնացին:

### ՅԵՐԵՐԴԻ ԶՐԱՒՅՑ

Այս անդամ յերեխաները նորից յեկան  
ակումբ և այստեղ բժիշկը, համառոտ կեր-  
պով կրկնելով անցած նյութը, կանգ առաջ  
ուշագնացութիւնն վրա: Կանգ առնելու  
պատճառն այն եր, վոր Միշան հարցրեց.

—Իսկ յեթե ընկնավոր ե ընկել, ի՞նչպես  
ոգնել նրան: Չե վոր նրան մոտենալ չի կարելի  
Բժիշկն ստիպված յեղավ կանգ առնել  
ընկնավորութիւնն վրա.

— Ընկնավորության հիմնական պատճառները դեռևս լրիվ պարզված չեն, այդ պատճառով ել ընկնավորին դժվար է բուժել: Բայց ընկնավորը վարակիչ չե և նրան պետք է ոգնել: Ոգնությունն այնքան ել դժվար չե: Ամենաեշականն այն ե, վոր ընկնավորը ջղաձգությունների ժամանակ գլուխը գետնին ե խփում և կարող ե վընասել ուղեղն ու անոթները: Ուժով դադարեցնել ջղաձգությունները՝ հնարավոր չե: Անհրաժեշտ ե հիվանդի գլխատակին, հարվածներից պաշտպանելու համար, վորեւ փափուկ բան դնել: Կարելի իւ չոքել հիվանդի գլխավերելու և, գլուխը դնելով ծընկին, ամուր սեղմել և պահել մինչև ջղաձրդությունը դադարի: Միաժամանակ պետք է թուլացնել ոձիքը, գոտին, վոր տղատ շնչի: Նրան ուշքի բերելու փորձեր չպետք ե անել: Պետք ե հանգիստ թողնել մինչև վոր ուշքի դա: Յեթե կոլեկտիվը բոլորին բժշկական քննության լենթարկի, ընկնավոր յերեխաները ճանբար չեն ընկնի: Այժմ,

յերեխաներ, անցնենք բուժարան և կը բենենք մեր անցած նյութերը, մանավանդ, վոր Միշան այդ դասերը չի լսել: Սրանից հետո ձեզ մնում ե միայն լավ նախապատրաստվել ճանբարը հաջող անց կացնելու համար: Ճանբարում յերեխաները պետք ե առողջանան, նոր գիտելիքներ ձեռք բերեն և ավելի կազմակերպված տուն վերադառնան:

---

## ՑԱՆԿ

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ԼՂ

4


## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Առաջին գրույց.—	Ինչպես կանգնեցնել տրյունհոսութ.	7
Յերկրորդ » .—	Ինչպես վերքը պաշտպահ վարակ՝ գեղք 16	
Յերրորդ » .—	Ինչպես ոգնել ջարդվածքների դեպք. 29	
Չորրորդ » .—	Ինչպես ոգնել ուշադնացութ. դեպք. 37	
Հինգերորդ » .—	Ինչպես ոգնել թունա, նյոււ, վնասով. 45	

## ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԼՂ

Առաջին գրույց .—	Ինչպես ոգնել արևահարներին	66
Յերկրորդ » .—	Ինչպես փոխա. հիվան. կամ վիրավ.	73
Յերրորդ » .—	Կրկնողութ. և զրույց ընկվոր. մասին	81



ՀՀ Ազգային գրադարան



NL0195610

